

530 տեն, պաղ ջուրն խմեն, ի բաղանիս լվացվին
 եւ զնան զճանապարհն իւրեանց. մէկ փող
 մի չտան:

ԿԱՄՈՒՐՁՔ

Դարձեալ ի վերայ զետոց եւ մեծամեծ
 աղբերաց եւ ջրոց, նաեւ ի տղմուտ տեղիս
 535 կնամուրջս վիմաչէն կամարակապ սայլիւք
 յիսուն, հարիւն, կամ այլ աւելի ահնով քա-
 րուկիր ամբոցիւք լայն եւ ընդարձակ ի վե-
 րայ անհուն ջրոց զուգեալ են: Ընդ որ ան-
 ցանեն մարդիք, գրաստք եւ անասունք եւ
 540 փող մի չտան, ի յամօթ եւ ի նախատինս
 սուտ քրիստոնէից, որ քանի մն փայտ զնեն
 ի տղմային տեղիս կամ փայտեայ կամուրջ
 շինեն եւ յանցանելն բռնութեամբ առնուն ի
 ճանապարհորդաց երկու գրամ՝ վասն արա-
 545 պէին կամ ձիուն. ո՛հ, ո՛հ:

ԱՂՕԹՔ ԵՒ ԾՈՒՄԱՊԱՀՔ ՏԱՃԿԱՅ

Դարձեալ զի են յոյժ աղօթասէրք, որ
 զհինգ նամազն ոչ թէ ի տան, այլ եւ ի ճա-
 նապարհս անգամ ոչ թողուն ի բաց, այլ ան-
 խափան կատարեն զցայգ եւ զցերեկ, նա եւ
 560 ի սաստիկ ձմեռն ի վերայ ջրոյն եւ ձեան
 պաղ ջրովն ողողին եւ աղօթեն, թէեւ յըն-
 կերաց յետ մնան: Ապա վա՛յ ինձ եղկելոյս,
 քրիստոնեայ գոլով՝ աւուրն անգամ մի զնալ

534 տղմուկ: — 538 յանհուն: — 544 ճանա-
 պարհաց ք գրամ արապէն: